ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

ՈՐՈՇՈՒՄ

« 8» «դեկտեմբերի» 2017 թվականի № 32

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8 _Ի ԹԻՎ 09 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 րդ հոդվածի 6- րդ պարբերության պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 09 նիստի օրակարգը՝

1. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին:
2. Արգավանդ համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
3. Գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություններ տալու մասին:
4. 2018 թվականի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:
5. Համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
6. Համայնքային ծառայողի նկատմամբ հավելավճար կիրառելու մասին:

Ավագանու անդամներ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ(0)

1.Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 8 » դեկտեմբեր 2017 թվականի № 33-Ն

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 20 -րդ և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ(0)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

Հավելված
Արգավանդ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 8-ի
N 33 -Ն որոշման

ԿԱՐԳ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Արգավանդ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:
2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Արգավանդ համայնքի ավագանու որոշումը:
3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8- րդ կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

4. Աղբահանության վճար վճարողներ են հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված անձինք:
5. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:
6. Աղբահանության վճարողների հաշվառումն իրականացնում են Արգավանդ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցը :

III. Աղբահանության վճարի հաշվարկումը

7. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝
1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձերի քանակով,
2) այլ շենքերի կամ շինությունների համար՝ ըստ արտադրվող աղբի ծավալի կամ զանգվածի՝ Արգավանդ համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերի սահմաններում:
8. Սույն կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝
1) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 10 դրամ
2) հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական

շինությունների մասով՝ 1 քմ -10 դրամ
3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 5 դրամ,
4) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 1 դրամ
5) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի բազմաբնույթ տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է առավել բարձր դրույքաչափով: Աղբահանության վճար վճարողի պահանջով (դիմումով) կարող է կատարվել վերահաշվարկ՝ ըստ շինության փաստացի նպատակային օգտագործման (չափերի, քմ) տեղեկությունների տրամադրման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Տվյալ դեպքում աղբահանության վճարը հաշվարկվում է ըստ փաստացի նպատակային նշանակության օգտագործման չափերի:

IV. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

9. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը իրականացվում են Արգավանդի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցը:
10. Գանձողը ստանում է Արգավանդի համայնքապետարանի կողմից տրամադրված՝ աղբահանության վճարի կանխիկ գանձման համար նախատեսված անդորրագրերը, որի համար Արգավանդ համայնքի ղեկավարի և գանձողի միջև կնքվում է անդորրագրերի հանձնման և ընդունման արձանագրություն:
11. Համակարգողն իրականացնում է գանձողի կողմից գանձված անդորրագրերի ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների և հայտի դեպքում՝ անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:
12. Գանձողը համակարգողից ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:
13. Գանձողը պարտավոր է տվյալ օրվա գանձված գումարը մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 16.00-ը բանկային կամ փոստային համակարգի միջոցով գումարը փոխանցել համապատասխան հաշվին, իսկ անդորրագրերը՝ մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը, մուտքագրել տվյալների հաշվառման շտեմարան: Գանձված անդորրագրերի երկրորդ օրինակը՝ համապատասխան ամփոփագրով, գանձողը պարտավոր է հանձնել համակարգողին՝ մինչև գանձված գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15.00-ն:
14. Աղբահանության վճարի հաշվառման և գանձման լիազորություններով օժտված աշխատակիցը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների վերաբերյալ:

V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

15. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:
16. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

VI. Այլ դրույթներ

17. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Արգավանդ համայնքի ղեկավարի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

ՈՐՈՇՈՒՄ

« 8» «դեկտեմբերի» 2017 թվականի № 34 - Ն

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով, 12-րդ և 14-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 - րդ հոդվածի 18 - րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արգավանդ համայնքի Սարալանջի և Կենտրոնական 2-րդ փողոցները ամբողջությամբ համարել առաջին գոտի, իսկ համայնքի մնացած փողոցներ՝ համարել երկրորդ գոտի:
2. Սահմանել Արգավանդ համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը

2.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույտվության համար տեղական տուրք սահմանել՝

հիմնական *շենքերի և շինությունների համար՝*

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական/ ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 դրամ.

բբ/ 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50.000 դրամ.

բգ/ 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50.000 դրամ.

բդ/ 3000-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝100.000 դրամ.

ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 դրամ.

դ/ 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000 դրամ:

2.2 *Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի, շինությունների, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման .և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝*

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3.000 դրամ.

բ/ բացի *շենքերի, շինությունների* վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառել նաև նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա կիրառել նոր շինարարության համար 1.1. կետով սահմանված նորմերը:

2.3 Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 5000 դրամ:

2.4 Համայնքի վարչական տարածքում ՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար *սահմանել* - 200.000 դրամ:

2.5 Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, և կրպակներում, հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանել- 60.000 դրամ:

2.6 Համայքնի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ -50.000 դրամ:

2.7 Համայնքի վարչական տարածքում. ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

ա/ մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4.000դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.500 դրամ,

գ/ 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝14 000դրամ,

դ/ 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21 000դրամ,

ե/ 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26.000դրամ,

զ/ 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնակւսն և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46.000 դրամ:

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/ մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4.000դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.500 դրամ,

գ/ 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝14 000դրամ,

դ/ 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝

21 000դրամ,

ե/ 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26.000դրամ,

զ/ 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 46.000 դրամ:

2.8 Բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար տեղական տուրքը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 350 դրամ

2.9 *Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/, ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել*

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 50000 դրամ,
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 30000դրամ,
գ/ բաղնիքների / սաունաների/ համար՝ 200 000 դրամ,
դ/ խաղատների համար՝ 500 000 դրամ,
ե/ շահումով խաղերի համար՝ 300 000 դրամ,
զ/ վիճակախաղերի համար՝ 150 000 դրամ:

2.10 Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

Հիմնական շինությունների ներսում՝

ա/ մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար - 5000 դրամ,
բ/ 26-ից մինչև 50 քառակուս իմետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար - 8.000 դրամ,
գ/ 50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 12.000դրամ,
դ/ 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 16 .000դրամ,
ե/ 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 22.000դրամ,
զ/ 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝32.000դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա/ մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝1.000 դրամ՝
բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 2000դրամ,
գ/ 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 3000դրամ,
դ/ 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար- 6.000դրամ,

ե/ 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝10.000դրամ,

զ/ 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար -16 .000դրամ:

2.11 Համայնքի տարածքի յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2.000 դրամ.

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3.500 դրամ.

գ/ սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

դ/ այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ,

ե/ դատարկ գովազդային վահանակների համար՝ այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 375 դրամ:

զ/ եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպությոան գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանել տուրք 150 դրամ

2.12 Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները /զինանշան, անվանում և այլն/, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան,ապրանքների արտադրության , աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ սահմանել 100.000դրամ:

2.13 Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների՝ /միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝սահմանել 10.000 դրամ՝

2.14 Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների ռականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 500.000 դրամ՝

3. Սահմանել Արգավանդ համայնքում 2018 թվականին տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը

3.1 համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել-5000 դրամ

3.2 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը,

վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել-5000 դրամ

3.3 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել-5000 դրամ

3.4 Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10000 դրամ:

3.5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների կազմակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 3000 դրամ:

3.6 . Համայնքի «ԱՆԱՀԻՏ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանել ամսեկան ծնողական վճար յուրաքանչյուր երեխայի համար- 7.000 հազ. դրամ

1/ Մանկապարտեզի ծնողական վճարից ազատել ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

3.7. Համայնքի Ա.Սայանի անվան երաժշտական դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց սահմանել ամսեկան վճար

1/ Համայնքում հաշվառում ունեցող մեկ երեխայի համար

ա/ Լարային, դաշնամուրի և ակորդեոնի բաժին - 3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ:

բ/Վոկալ բաժին - 3200 /երեք հազար երկու հարյուր/ դրամ:

2/ Համայնքում հաշվառում չունեցող մեկ երեխայի համար՝

ա/ Լարային, դաշնամուրի և ակորդեոնի բաժին - 4500 /չորս հազար հինգ հարյուր/ դրամ:

բ/Վոկալ բաժին - 4000 /չորս հազար/ դրամ:

3/ Երաժշտական դպրոցի վճարից զեղչել

ա/ծնողազուրկ

բ/միակողմանի ծնողազուրկ

գ/սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

3.8. Համայնքի կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար յուրաքանչյուր ամիս սահմանել վճար

ա/ կենցաղային աղբի համար յուրաքանչյուր բնակչից- 100 դրամ

բ/ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և տեղափոխման համար՝ ըստ ծավալի՝ 1 խմ-ի համար 500 դրամ

գ/ առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 10 դրամ

դ) հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ -10 դրամ

ե) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 5 դրամ,

զ) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 1 դրամ

3.9 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար սահմանել 5.00 դրամ:

4. Արգավանդ համայնքի 1-ին գոտում կիրառել 0.75 գործակիցը, իսկ 2-րդ գոտում կիրառել 0.5 գործակիցը:

5. Սույն որոշման 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համար կիրառել 0.5 գործակիցը:

Ավագանու անդամներ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ(0)

1.Աղախանյան Արման

2.Մարգարյան Տիգրան

3. Նավասարդյան Վահագ

4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 8 » դեկտմբերի 2017 թվականի № 35

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15 -րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Արգավանդ համայնքի ներքոհիշյալ բնակիչներ Սարգիս Մանուկյանի, Սուսաննա Համբարձումյանի, Քաջիկ Անտիկյանի, Էմմա Մովսիսյանի, Կամելյա Ոսկանյանի, Ժուդեքս Գևորգյանի, Թաթուլ Թովմասյանի, Սաշա Օհանյանի , Թագուհի Յաղուբյանի Շողիկ Հովհաննիսյանի, Թամարա Բաբայանի, Վահե Վարդերեսյանի, Ռոզա Դավթյանի , Էմմա Միրիջանյանի Կարեն Մարգարյանի և Անիչկա Մարգարյանի դիմումները

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արարատի մարզի Արգավանդ համայնքի ներքոհիշյալ բնակիչներին տալ գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություններ

1. Սարգիս Մանուկյանին, հասցեն՝ գ.Արգավանդ,Կենտրոնական 1-ին փողոց թիվ 25, բն. շինություն, կադաստրային ծածկագիր/ 022-005/ -8474 /ութ հազար չորս հարյուր յոթանասունչորս / ՀՀ դրամ
2. Սուսաննա Համբարձումյանին,հասցեն գ. Արգավանդ,Կենտրոնական 1-ին փողոց թիվ 39, բն. շինություն, կադաստրային ծածկագիր /010-013/- 60.792 /-վաթսուն հազար յոթ հարյուր իննսուներկու ՀՀ դրամ

3. Քաջիկ Անտիկյանին, հասցեն գ. Արգավանդ, Կենտրոնական փողոց թիվ 30, ՄՈՍԿՎԻՉ-412 մակնիշի 27SS259 պ/հ փ/միջոց- 58353 /հիսունութ հազար երեք հարյուր հիսուն երեք/ ՀՀ դրամ

4. Էմմա Մովսիսյանին, հասցեն գ.Արգավանդ, Հրազդանի 2-րդ փողոց թիվ 15, բն.շինություն, կադաստրային ծածկագիր /039-002/ - 40.294/ քառասուն հազար երկու հարյուր իննսունչորս/ՀՀ դրամ

5. Կամելյա Ոսկանյանին, հասցեն՝ գ. Արգավանդ, կենտրոնական փողոց թիվ 49, բն. շինություն, կադաստրային ծածկագիր /034-015/- 16.880 / տասնվեց հազար ութ հարյուր ութանասուն/ ՀՀ դրամ

6. Ժուդեքս Գևորգյանին, հասցեն՝ գ.Արգավանդ, Կենտրոնական փողոց թիվ 40, բն.շինություն, Կադաստրային ծածկագիր /045-008/ - 17.187 /տասնյոթ հազար հարյուր ութսունյոթ/ ՀՀ դրամ

7. Թաթուլ Թովմասյանին,հասցեն՝ գ.Արգավանդ, Կենտրոնական 1-ին փողոց թիվ 9, բն.շինություն,կադաստրային ծածկագիր /026-001/ - 27.369- /քսանյոթ հազար հազար երեք հարյուր վաթսունինը/ ՀՀ դրամ

8. Սաշա Օհանյանին, հասցեն՝ գ. Արգավանդ, Հրազդանի 1-ին փողոց թիվ 26 բն.շինություն, կադաստրային ծածկագիր /059-009/- 51.237 /հիսունմեկ հազար երկու հարյուր երեսունյոթ/ ՀՀ դրամ

9. Թագուհի Յաղուբյանին,հասցեն՝ գ.Արգավանդ, կենտրոնական 1-ին փողոց թիվ 45 հողի հարկ, կադաստրային ծածկագիր /019-021/ - 7.648 /յոթ հազար վեց հարյուր քառասունութ / ՀՀ դրամ

10. Շողիկ Հովհաննիսյանին , հասցեն՝ գ.Արգավանդ , Հրազդանի 1-ին փողոց թիվ25, բն. շինություն, կադաստրային ծածկագիր /038-006/ - 47.944/ քառասուն յոթ հազար ինը հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ

11. Թամարա Բաբայանին, հասցեն՝ գ. Արգավանդ, Կենտրոնական 5-րդ փողոց թիվ 24, բն. շինություն, կադաստրային ծածկագիր /016-027/, -64.522 /վաթսունչորս հազար հինգ հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ

12. Վահե Վարդերեսյանին, հասցեն գ. Արգավանդ,Օդանավակայանի 1-ին փող., թիվ 21, MERSEDES-BENZ C220 մակնիշի 29US268 պ/հ փ/միջոց- 22.736-/քսաներկու հազար յոթ հարյուր երեսունվեց/ ՀՀ դրամ

13. Ռոզա Դավթյանին, հասցեն գ.Արգավանդ, Կենտրոնական 4-րդ փողոց թիվ 10,բն. շինություն, կադաստրային ծածկագիր /017-025/ - 58.938 -/հիսունութ հազար ինը հարյուր երեսունութ/ ՀՀ դրամ

14. Էմմա Միրիջանյանին, հասցեն՝ գ.Արգավանդ, Կենտրոնական փողոց թիվ 57, բն.շինություն, կադաստրային ծածկագիր /035-027 /- 13.217 /տասներեք հազար երկու հարյուր տասնյոթ/ ՀՀ դրամ:

15.Կարեն Մարգարյանին, հասցեն՝ գ. Արգավանդ,Ս.Սարգիս Զոր.փողոց թիվ 43, բն.շին.,կադաստրային ծածկագիր / 036-003/- 14.853 /տասնչորս հազար ութ հարյուր հիսուն երեք/ ՀՀ դրամ

16.Կարեն Մարգարյանին, հասցեն՝ գ. Արգավանդ,Ս.Սարգիս Զոր.փողոց թիվ 43, հողի հարկ ,կադաստրային ծածկագիր / 036-003/- 2.458 /երկու հազար չորս հարյուր հիսունութ/ ՀՀ դրամ

17. Անիչկա Մարգարյանին, հասցեն՝ գ. Արգավանդ, Օդանավակայանի 5-րդ փողոց թիվ 3, հողի հարկ,կադաստրային ծածկագիր /060-002/ -2.186 /երկու հազար հարյուր ութսունվեց/ ՀՀ դրամ:

Ավագանու անդամներ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ(0)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԳԱՎԱՆԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 8 » դեկտեմբեր 2017 թվականի № 36 -Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2018թ. համար սահմանել 220.000 /երկու հարյուր քսան հազար / ՀՀ դրամ:

Ավագանու անդամներ՝ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ(0)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐԳԱՎԱՆԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2017 թվականի № 37 -Ն

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28 -րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Արգավանդի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2018 թվականի համար՝ համաձայն հավելվածների:

Ավագանու անդամներ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ(0)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

Հավելված 1
Արգավանդ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 8-ի
№ 37-Ն որոշման

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ 13
2. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ԱՄՍԵԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ	ՀԱՎԵԼԱՎՃԱՐ	
			Դաս.աստիճան	ստաժ
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	152.000		
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	165.000	6000	
Աշխատակազմիգլխավոր մասնագետ /2.3-1/	1	158.000		
Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1-1,/	1	132.000		
Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1-2/	1	132.000	6000	13.200
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	124.000		
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/	1	123 .000		
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ				
Մշակույթի տան տնօրեն	1	72.750		
Գրադարանավար	1	78.000		
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
Վարորդ	1	86.000		
Պահակ	2	72.750		
Հավաքարար	1	83.000		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

Հավելված 2
Արգավանդ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 8-ի
№ 37-Ն որոշման

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆԱՀԻՏ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ 13
2. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ԱՄՍԵԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	115.000
Դաստիարակ	2	100.000
Դաստիարակի օգնական	1	78.000
Դաստիարակի օգնական	1	72.750
Երաժշտության դաստիարակ	0.5	72.750
Հաշվապահ	0.5	72.750
Բուժքույր	0.5	72.750
Գործավար	0.5	72.750
Խոհարար	1	78.000
Խոհարարի օգնական	0.5	72.750
Տնտեսվար	0.5	72.750
Պահակ,դռնապահ	1.25	90.000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

Հավելված 3
Արգավանդ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 8-ի
№ 37-Ն որոշման

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՍԵՆ ՍԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ 12
2. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ԱՄՍԵԿԱՆ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	125.000
Հաշվապահ	1	72.750
Ուսուցիչ /միջինը մեկ հաստիքային միավորի/	2	97.500
Ուսուցիչ /միջինը մեկ հաստիքային միավորի/	7	104.500
Հավաքարար, օժանդակ բանվոր	1	78.000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք. Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 8» դեկտեմբերի 2017 թվականի № 38-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5 –րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արգավանդի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության առնվազն տասը տարի աշխատանքային ստաժ ունեցող համայնքային ծառայող Մարետ Գրիգորյանի դրույքաչափի նկատմամբ կիրառել 10 տոկոս հավելավճար:

Ավագանու անդամներ կողմ (4) դեմ (0) ձեռնպահ(0)

1. Աղախանյան Արման
2. Մարգարյան Տիգրան
3. Նավասարդյան Վահագ
4. Ոսկանյան Էլմիրա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ